

7253



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝



Երջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող

Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2024թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 102 - 24

Նախաձեռնող՝

«Էն Էռ Էմ» ՓԲԸ

ք. Երևան, Անդրանիկի փողոց, 56 շենք, 10 բն.,

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային  
հանքավայրի հարակից տարածքների երկրաբանական  
ուսումնասիրություն

Սիսիան համայնք

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 102 - 24

«28» հունիսի 2024թ.

**Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հարակից տարածքների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝

«Էն Էռ Էմ» ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ (Բ կատեգորիա)

Տեղադրման վայրը՝

Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Դաստակերտ բնակավայր

**Ներածական մաս.** Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հարակից տարածքներում նախատեսվում է իրականացնել որոնողահանության ընդլայնված օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Գործունեության նպատակը Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների հավելաճի համար տվյալ օբյեկտի հարակից տարածքներում առավել հեռանկարային տեղամասերի բացահայտումն է:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի «ա» ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

**Նկարագրական մաս.**

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

1	8589046.0000	4357347.0000
2	8588561.0000	4357243.0000
3	8587736.0000	4356976.0000
4	8587673.0000	4357976.0000
5	8587562.0000	4359137.0000
6	8587090 0000	4360091 0000





7	8586831.0000	4360073.0000
8	8586813.0000	4360328.0000
9	8587002.0000	4361028.0000
10	8587054.0000	4361293.0000
11	8587049.0000	4361441.0000
12	8586880.0000	4361334.00000
13	8586776.0000	4361756.0000
14	8586836.0000	4361851.0000
15	8587124.0000	4362202.0000
16	8587347.0000	4362488.3386
17	8588052.0000	4361561.0000
18	8587717.0000	4361412.0000
19	8587875.0000	4361245.0000
20	8587891.0000	4360613.0000
21	8588250.0000	4360531.0000
22	8588306.0000	4360795.0000
23	8588518.0000	4360802.0000
24	8588958.0000	4360170.0000
25	8590354.0000	4360883.0000
26	8591964.0000	4360848.0000
27	8591998.0000	4358976.0000
28	8589516.0000	4357529.0000
29	8589046.0000	4357347.0000
1	8589046.0000	4357347.0000

Նշված կորորինատներով պարփակված ուսումնասիրվող տարածքները կադաստրային քարտեզում տեղադրելիս իրենց սահմաններում ներառում են Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դաստակերտ, Նժդեհ և Լոր բնակավայրերի՝ 300-ից ավելի պետական, համայնքային, իրավաբանական անձանց ու քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, էներգետիկայի, կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, ջրային նպատակային նշանակությունների հողամասեր: Ընդերքի հայցվող տեղամասը գտնվում է Սյունիքի մարզի կենտրոնական մասում: Այն անմիջապես հարում է Դաստակերտ բնակավայրի հարավային մերձակայքին:

Հայցվող տեղամասը զբաղեցնում է 1413.1 հա մակերես և ներառում է Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրին հարակից տարածքները՝ բացառելով բուն հանքավայրի վերագնահատման նպատակով ընկերության արդեն իսկ տրամադրված տարածքը:

Մոտակա բնակավայրերից են նաև արևմուտքում՝ Յդունի (1.0 կմ) և Նժդեհ (2.0 կմ) հյուսիսում՝ Տորունիք (3.0 կմ) և արևելքում՝ Շենաթաղ (7.5 կմ) գյուղերը: Տարածքի սահմանափակումը





բարձր լեռնային է: Այն բնութագրվում է կտրատված ռելիեֆով՝ խորը կիրճերով և զառիթափ լանջերով: Մակերևույթի ամենացածր բացարձակ նիշերը (1922 մ.) փաստված են հայցվող տեղամասի հյուսիսային ծայրամասում՝ Այրիգետ և Աղջկաձոր գետակների միախառնման վայրում, իսկ ամենաբարձրը՝ տեղամասի կենտրոնում՝ 2856.2 մ բացարձակ նիշով: Հայցվող տարածքը գործնականում զուրկ է բուսականությունից, դրա մոտ 40 %-ը ժայռոտ է: Տարածքի միջնամասով հոսում է Այրիգետի աջ վտակ Աղջկաձոր գետը:

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների բնույթն ու տեսակները պայմանավորված են այն հանգամանքով, որ Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրին հարակից տարածքների մասին ֆոնդային նյութերում առկա երկրաբանական տեղեկատվության ուսումնասիրության ընթացքում ծագել են հարցեր դրանց երկրաբանական կառուցվածքի և էլեկտրապրոֆիլավորմամբ կանխատեսված անոմալիաների տարածական դիրքերի հետ կապված: Մասնավորապես՝ առանձնացված գեոֆիզիկական անոմալիաները (առավել բարձր բևեռացման գոտիները) հիմնականում հիդրոթերմալ փոփոխված ապարների տարածման սահմաններից դուրս են, մինչդեռ մետաղական հանքայնացումը, որպես կանոն, բնորոշ է հենց վերջիններին: Նշված հարցը պարզաբանելու համար անհրաժեշտ է ճշգրտել դիտարկվող տարածքում երկրաբանական և երկրաֆիզիկական իրավիճակների մասին մինչ օրս ձևավորված պատկերացումները, ինչը կարող է ապահովվել այդ տարածքում նոր, խոշորամասշտաբ երկրաբանական և երկրաֆիզիկական հանույթներ իրականացնելով:

Սույն ծրագրով հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, հնէաբանական և գեոդեզիական բնույթի աշխատանքներ, ինչպես նաև լեռնային փորվածքների և հորատանցքերի անցկացում նախատեսված չէ, քանի որ երկրաբանական առաջադրանքում սահմանված նպատակին հասնելու համար դրանց անհրաժեշտությունը չկա: Երկրաբանական բնույթի աշխատանքներից սույն ծրագրով նախատեսված է միայն 1:10000 մասշտաբի երկրաբանական հանույթը, որն իրականացվելու է ավանդական մեթոդով ու եղանակով՝ որոնողահանութային երթուղիների անցկացմամբ: Վերջիններիս ընթացքում կիրականացվի.

- լեռնային ապարների բնական մերկացումների և տարածքում հանդիպող ջրային օբյեկտների թղթային և լուսանկարային փաստագրում,

- լեռնային ապարների նմուշարկման և նմուշների նախնական զննման արդյունքներով քարադարանի ձևավորում,

- դաշտում վերցված բոլոր նմուշներից մանրակրկիտ քարաբանամիներալաբանական նկարագրության և քիմիական անալիզների ենթարկվելիք նմուշների ընտրություն՝ համապատասխան մասնագիտացված կառույցներում ուսումնասիրելու համար:

Առկայության դեպքում փաստագրման կենթարկվեն նաև վտանգավոր գեոդինամիկ երևույթներով բնութագրվող տարածքները: Որոնողահանութային երթուղիները, որպես կանոն, ուղղված են լինելու հիմնական երկրաձևաբանական տարրերի տարածմանը խաչվող ուղղությամբ: Միջին հեռավորությունը դրանց միջև կազմելու է 100 մ, իսկ երթուղիների երկայնքով փաստագրվելիք դիտարկման կետերի միջև՝ 20 մ: Որոնողահանութային երթուղիների ընդունված խտության պարագայում դրանց ընդհանուր երկարությունը հանույթի ենթարկվող 1 քառակուսի կիլոմետր տարածքի սահմաններում կկազմի 10 կմ, իսկ երկրաբանական ուսումնասիրության համար սույն ծրագրով հայցվող ամբողջ տարածքի սահմաններում՝ 144 կմ: Այս դեպքում փաստագրման ենթակա դիտարկման կետերի ընդհանուր քանակը հավասար կլինի 7200-ի: Ակնկալվում է, որ փաստագրման կենթարկվեն առավելագույնը 15 ջրային օբյեկտ և վտանգավոր գեոդինամիկ երևույթներով բնութագրվող 1-2 տարածքներ, ինչպես նաև մոտավորապես 2880 բնական մերկացումներ: Վերջիններիս քանակը կանխատեսելիս հաշվի է առնվել, որ ուսումնասիրվելիք տարածքը բնութագրվում է 40 % մերկացվածությամբ: Ապարների բնական ելքերը (մերկացումները) փաստագրելիս հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց քարաբանամիներալաբանական նկարագրությանը, ճեղքավորվածության ու փոփոխվածության բնույթին և աստիճանին,





տեղադրման տարրերին, հանքայնացման առկայությանը, տիպին, աստիճանին և այլն: Մերկացումները դաշտային գրքույկներում գծապատկերվելու են 1:100 կամ 1:200 մասշտաբով՝ կախված դրանց չափերից: Զրային օբյեկտներում կիրականացվի ջրի դեբիտի և ջերմաստիճանի չափագրում: Վտանգավոր գեոդինամիկ երևույթներով բնութագրվող տարածքները կլուսանկարվեն: Փաստագրվող բոլոր օբյեկտները (դիտարկման կետերը, մերկացումները, ջրային օբյեկտները և այլն) ենթարկվելու են տեղակապման՝ GPS սարքի օգնությամբ:

Երկրաֆիզիկական աշխատանքներով նախատեսվում է ընդգրկել սույն ծրագրով երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող ամբողջ տարածքը՝ 14.2 քկմ: Այդ աշխատանքների արդյունքում ենթադրվում է ուսումնասիրվող տարածքում բացահայտել անոմալիաներ և եզրագծել հանքայնացման տեսանկյունից առավել հեռանկարային տիրույթներ, որոնք հետաքրքրական կլինեն հետագա երկրաբանական ուսումնասիրության համար: Երկրաֆիզիկական աշխատանքները հանգելու են ուսումնասիրվելիք տարածքի 1:10000 մասշտաբի երկրաֆիզիկական հանույթի, որը նախատեսվում է իրականացնել էլեկտրապրոֆիլավորման եղանակով, հարուցված բևեռացման մեթոդով, ժամանակակից սարքավորումների օգտագործմամբ: Օգտագործվելու է էլեկտրահետախուզման գններատոր (տրանսմիտեր)՝ մոտ 1 կՎտ հզորությամբ, երկրորդական դաշտի չափիչ սարք՝ ռեսիվեր: Նմուշարկման աշխատանքներն իրականացվելու են բացառապես փաստագրման ենթարկվող ապարների բնական ելքերի (մերկացումների) սահմաններում: Սույն ծրագրով նախատեսված են ուսումնասիրվող տարածքում մերկացած ապարների ապարակտորային և ակոսային նմուշառման եղանակները՝ համապատասխանաբար դրանց քարաբանամիներալաբանական և քիմիական կազմերը որոշելու նպատակով: Ընդ որում, ակոսային նմուշառման են ենթարկվելու միայն ակնադիտական զննման արդյունքում հանքայնացվածներին վերագրվող ապարները, իսկ ապարակտորային նմուշառմանը՝ հարևան մերկացումներից ապարակազմով զանազանվող մերկացումների ապարները: Ակոսային նմուշառումն իրականացվելու է սեպով և մուրճով: Ակոսների միջին խորությունը կկազմի 5 սմ, իսկ լայնությունը՝ 10 սմ: Մինչև 1 մ ձգվածությամբ հանքայնացած միջակայքերը նմուշարկվելու են անընդհատ գծով: Հակառակ դեպքում իրականացվելու է կետագծային նմուշառում: Ակնկալվում է, որ ծրագրվող աշխատանքների ընթացքում քիմիական անալիզների համար կվերցվեն և մասնագիտացված լաբորատորիա կուղարկվեն ընդամենը 50 ակոսային նմուշներ, իսկ քարաբանամիներալաբանական կազմերը երկրաբանահանության աշխատանքներին զուգընթաց բնութագրելու համար՝ 1400 ապարակտորային նմուշներ, որոնցից 200-ը կառանձնացվեն նաև մասնագիտացված կազմակերպությունում ուսումնասիրելու համար: Նմուշարկման են ենթարկվելու նաև բոլոր փաստագրվող ջրային օբյեկտները (մեկական նմուշ)՝ ջրերի որակը համապատասխան լաբորատորիայում գնահատելու նպատակով: Նմուշների լաբորատոր հետազոտությունները հանգելու են ուսումնասիրվող տարածքի ապարների նյութական կազմի և նմուշարկված ջրերի որակի գնահատմանը:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում վտանգված էկոհամակարգերը բացակայում են: Ուսումնասիրվող տարածքում և մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքը «Զանգեզուր» պետական արգելավայրն է, որի ամենամոտ սահմանը ուսումնասիրության համար հայցվող տարածքից ուղիղ գծով կազմում է 2 կմ: Չնայած այն հանգամանքին, որ երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքի սահմանագծի ամենամոտ հեռավորությունը «Զանգեզուր» պետական արգելավայրից կազմում է շուրջ 2 կմ, ինչպես նաև այն փաստը, որ ուսումնասիրությունների ընթացքում չորևէ հորատման և լանդշաֆտի խախտման աշխատանքներ չեն նախատեսվում քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են որոնողահանության երթուղիների անցկացմամբ լեռնային ապարների նմուշարկման





մեթոդով, այնուամենայնիվ, երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում Ընկերությունն առաջնորդվելու է ««Ձանգեզուր» պետական արգելավայր ստեղծելու և ՀՀ Կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N926-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին» ՀՀ Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N 1187-Ն որոշման պահանջներով՝ նպատակ ունենալով որևէ բացասական ազդեցության բացառումը «Ձանգեզուր» պետական արգելավայրի կենսամիջավայրի վրա: Համաձայն ՀՀ Կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն որոշմամբ հաստատված ցանկի՝ ուսումնասիրվող տարածքին ամենամոտ բնության հուշարձանը («Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր) գտնվում է Այունիքի մարզի Սիսիան քաղաքի հյուսիս-արևելյան եզրին և ուսումնասիրման ենթակա տարածքից գտնվում է շուրջ 20 կմ հեռավորության վրա: Քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են որոնողահանութային երթուղիների անցկացմամբ լեռնային սպարների նմուշարկման մեթոդով, ուստի մթնոլորտային օդի վրա ազդեցությունը կլինի աննշան՝ պայմանավորված միայն գրունտային ճանապարհներով մեքենաների երթևեկությամբ: Դրա արդյունքում արտանետվող փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, նախատեսվում է տարվա չոր և շոգ ժամանակահատվածում իրականացնել գրունտային ճանապարհների ջրցանում: Ջրցանում իրականացնելու համար ներգրավվելու է մասնագիտացված կազմակերպություն, որը կունենա համապատասխան տեխնիկա: Հաշվի առնելով, որ աշխատանքներին ներգրավված է լինելու ժամանակակից տեխնիկա, ուստի դրանց շարժիչներից արտանետումները լինելու են թույլատրելի սահմաններում: Քանի որ երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ հորատման աշխատանքներ չեն նախատեսվում, մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի լինի: Երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում նախատեսվում է նաև ջրի նմուշառում Այրիգետի աջ վտակ Աղջկաձոր գետից, ուստի նմուշարկման գործընթացն իրականացվելու է դրա համար սահմանված մեթոդակարգերին համաձայն՝ բացառելով գետի ջրերի որևէ աղտոտում: Երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում հողի աղտոտում կարող է տեղի ունենալ միայն դաշտային աշխատանքներին ներգրավված աշխատակիցների սպասարկման ժամանակ՝ պայմանավորված առաջացող կենցաղային աղբով և մեքենաներից յուղի և վառելիքի արտահոսքով: Հողի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու նպատակով նախատեսվում է՝

- աշխատակիցների սպասարկման տարածքները կահավորել համապատասխան աղբարկղերով և անհրաժեշտության դեպքում՝ սեպտիկ սանհանգույցներով,
- տարածքից կենցաղային աղբի հեռացումն իրականացվելու է Դաստակերտ բնակավայրն սպասարկող աղբահանության ծառայության միջոցով՝ վերջինի հետ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելով,
- երկրաբանական ուսումնասիրության գործընթացում ներգրավված մեքենաները շահագործվելու են միայն սարքին վիճակում, դրանց տեխնիկական սպասարկումն իրականացնվելու է Դաստակերտ և Սիսիան քաղաքներում գործող տեխսպասարկման կազմակերպություններում, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում՝ դաշտային պայմաններում տեխսպասարկում իրականացնելու ժամանակ մեքենայից հանվող յուղերը հավաքվելու են մետաղական տակառներում և հանձնվելու են դրա վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության,
- հողի վրա յուղերի կամ վառելիքի թափման դեպքում, աղտոտված հողը լցվելու է մետաղական տակառների մեջ և հանձնվելու է վտանգավոր թափոնների ոչնչացմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության:





Երկրաբանական ուսումնասիրության ուրվագծում ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող հատվածներ կամ այդպիսի տարածքների սանիտարական գոտիներ:

Կենսաբազմազանության վրա անցանկալի ազդեցություններն առավել մեղմելու համար անհրաժեշտ է.

- նվազագույնի հասցնել փոխադրամիջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս,
- բացառել բնադրման և թխսման շրջանում այդ գործընթացի վրա ազդեցության դիսկ ունեցող աշխատանքների իրականացումը:

Նախնական գնահատման հայտի կազմման ժամանակ իրականացված կենսաբազմազանության հետազոտությունների ընթացքում և գրականական տվյալների ուսումնասիրության ժամանակ, երկրաբանական ուսումնասիրությունների համար հայցվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված մուֆլոններ և/կամ դրանց միգրացիոն ուղիներ չեն հայտնաբերվել: Հարկ է ընդգծել, որ նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում որևէ հորատման և լանդշաֆտի խախտման աշխատանքներ չեն նախատեսվում, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են որոնողահանությամբ երթուղիների անցկացմամբ լեռնային ապարների նմուշարկման մեթոդով, հետևաբար, նույնիսկ մուֆլոնների և/կամ նրանց միգրացիոն ուղիների առկայության դեպքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները դրանց վրա որևէ ազդեցություն ունենալ չեն կարող: Ընկերությունը, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի՝ հատկապես ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների (մասնավորապես՝ մուֆլոնների) վրա ունեցած ազդեցությունը նվազագույնի հասցնելու և, ինչու չէ, նաև բացառելու նպատակով, նախատեսում է երկրաբանական ուսումնասիրություններում ընդգրկված աշխատակիցների շրջանում հրավիրված համապատասխան մասնագետների օգնությամբ իրականացնել պարբերական հրահանգավորումներ՝ Կարմիր գրքում գրանցված տեսակների և նրանց միգրացիոն ուղիների պահպանության վերաբերյալ: «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի № 191-Ն որոշման պահանջների համաձայն, Ընկերությունը երկրաբանական ուսումնասիրությունների ողջ ժամանակահատվածում իրականացնելու է կենսաբազմազանության մշտադիտարկումներ, որոնց ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվելու կարմիրգրքային տեսակների և դրանց միգրացիոն ուղիների (մասնավորապես՝ մուֆլոնների) դիտարկմանը, և դրանց առկայության որևէ հետք հայտնաբերելու դեպքում նախատեսում է իրականացնել համապատասխան քարտեզագրման աշխատանքներ, որոնց արդյունքները կարտացոլվեն համապատասխան եռամսյակային և տարեկան հաշվետվություններում և կներկայացվեն շրջակա միջավայրի պահպանության լիազոր մարմնին:

Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների հավելածի համար հեռանկարային տեղամասերի բացահայտման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ողջ ժամանակահատվածի համար Ընկերության կողմից մշակվել է բնապահպանական մոնիթորինգի ծրագիր և կառավարման պլան: Մոնիթորինգի միջոցառումները ներառում են՝

- մակերևութային ջրերի նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն՝ շաբաթական մեկ անգամ,
- ստորերկրյա ջրերի նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն՝ ամսական մեկ անգամ,





- մթնոլորտային օդի նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով՝ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ,

- հողային ծածկույթի նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով՝ համապատասխանաբար տարեկան մեկ անգամ և ամսական մեկ անգամ,

- վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում՝ տարեկան մեկ անգամ:

Շրջակա միջավայրի կառավարման պլանով նախատեսված են ծախսեր, որը կկազմի 300 հազար ՀՀ դրամ: Բնապահպանական մոնիթորինգի պլանով նախատեսված ծախսերը կկազմեն 22460 հազար ՀՀ դրամ: Չնախատեսված ծախսերը կկազմեն 10% = 2276 հազար ՀՀ դրամ՝ ընդամենը՝ 25063 հազար ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Սյունիքի մարզի Դաստակերտ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն կարճաժամկետ և տեղայնացված բնույթ, կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվող տարածքում և շրջակայքում առկա են բազմաթիվ մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսներ՝ հետագայում հանքավայրի աղյունահանման աշխատանքները կարող են առաջացնել էական բնապահպանական ռիսկեր՝ տարածքի ջրաէկոհամակարգերի սանիտարական գոտիների, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման համար, ուստի հետագա հանքարդյունահանման աշխատանքների իրականացումը չի երաշխավորում դրական փորձաքննական եզրակացության տրամադրումը:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

3. Աշխատանքների իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N





438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

4. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

5. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

6. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, բնապահպանական պահանջների կատարումը:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Էն Էռ Էմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հարակից տարածքների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Էրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան